



Հետաքրքիր է իմանալ

Բոլոր կենդանի օրգանիզմները շնչում են օդ: Բայց օդը պարունակում է ոչ միայն ձեռք հայտնի գազերը, այլև փոշի, մրի մասնիկներ և զանազան այլ նյութեր, որոնք վրանգավոր են մարդու և մյուս կենդանի օրգանիզմների կյանքի համար: Այդ վրանգավոր նյութերը մթնոլորտում հայտնվում են մարդու գործունեության հետևանքով: Օրինակ, ավտոմոբիլային տրանսպորտը, որն աշխատում է բենզինով, մթնոլորտ է արտանետում նրա այրման արգասիքները՝ ածխածնի, ազոտի օքսիդներ, ալդեհիդներ, ծծմբային գազ: Ավտոդողերի մաշումից առաջանում է ցինկ, դիզելային շարժիչներն արտանետում են կադմիում: Մրանք բոլորն ուժեղ թունավորիչներ են: Զերմաէլեկտրականներն իրենց հերթին մթնոլորտն աղբոտում են ածխաթթու գազով, ծծմբաջրածնով, ծծմբի օքսիդով, ածխի ու մրի մասնիկներով: Տարբեր գործարաններ ծուխ ու մուր են արտանետում իրենց շրջակա միջավայրը: Նմանատիպ վնասներ են հասցնում ինքնաթիռները, փեկերանավերը փեկերք փանող փարափեռակ հրթիռները: Մթնոլորտը ծխով ու մրով, ածխաթթու գազով աղբոտում են աշխարհի փարբեր մասերում հաճախակի բռնկվող անտառային հրդեհները: Այս ամենը կանխելու, մաքուր օդ ունենալու համար հարկավոր է խնամքով վերաբերվել բնությանը, նվազեցնել վնասակար վառելանյութերի օգտագործումը, գործարաններից արտանետվող ծուխն ու զանազան այլ գազերը մաքրել զրիչ սարքերով: Էկոլոգիապես մաքուր միջավայրի ձևավորման գործին իրենց մասնակցությունը կարող են ունենալ նաև դպրոցական երեխաները: Նրանք կարող են, օրինակ, մասնակցել ծառայրնկման աշխատանքներին (ծառերը հարապացնում են օդը թթվածնով և կլանում են նրանից ածխաթթու գազ): Երեխաները կարող են նաև հեղնել իրենց բակի մաքրությանը, մասնակցել աղբի հեռացման և նմանատիպ այլ աշխատանքների: